

# X ԵՎ 0

Ժամանակի սահմանափակում՝ 0.3 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Բաբկենը և Գրիգորը իքսիկ-նոլիկ են խաղում  $N \times M$  չափի վանդակավոր թղթի վրա: Բայց նրանք չգիտեն խաղի կանոնները, պարզապես, մեկը ինչ-որ վանդակներում  $X$ -եր է նկարում, մյուսը՝  $0$ -եր: Ընդ որում դա հերթով չեն անում, կարող են ստացվել տարբեր քանակով իքսիկներ և նոլիկներ: Բաբկենը և Գրիգորը մանկապարտեզի երեխաներ են: Նրանք հաշվել էլ չգիտեն: Հաղթողին որոշելու համար երեխաները դիմեցին իրենց ավագ եղբորը՝ Աբգարին: Վերջինս որոշեց, որ հաղթում է նա, ով իր նշանից մի գծի վրա (տողերով, սյուներով կամ անկյունագծերով) իրար հաջորդող առավել շատ սիմվոլներ է նկարել: Աբգարը հաշվել գիտի, բայց վախենում է սխալվել: Օգնեք նրան. գրեք ծրագիր, որը ներառում է սիմվոլների մատրից և արտաձում է մի գծի վրա իրար հաջորդող նույն սիմվոլներից կազմված ամենաերկար շղթայի երկարությունը:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են վանդակավոր թղթի  $N$  և  $M$  ( $1 < N, M \leq 100$ ) չափերը: Հաջորդ  $N$  տողերից յուրաքանչյուրում կան  $M$  սիմվոլներ՝  $X$ ,  $0$  կամ  $.$  (դատարկ վանդակներ):

## Ելքային տվյալներ

Արտաձել մեկ թիվ՝ իրար հաջորդող նույն սիմվոլներից ( $X$  կամ  $0$ ) կազմված ամենաերկար շղթայի երկարությունը:

## Օրինակ

Մուտք	Ելք
4 4 XX.O X.O ... XXXO	3